ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-18/24/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով

վառելիքի /բենզին ռեգուլյար/ ձեռքբերման

գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 28.09.2018 ժամը 12.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Սարոյանը

Անդամներ՝ Հ. Հարությունյանը

Ա. Գաբրիելյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Նիկոլյանը

1. Ընդունել ի գիտություն.

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ 24.08.2018թ. հարցում է ուղարկվել «ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-18/24/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած «Սիփիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

1.2 Գնահատող հանձնաժողովի 24.09.2018թ. թիվ 2 որոշմամբ, ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով առաջին տեղը զբաղեցրած «Սիփիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ից պահանջվել է 28.09.2018թ. /երեք աշխատանքային օրվա ընթացքում/ ներկայացնել Կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթը, նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը, ինչպես նաև՝ ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը /ամբողջական նկարագիրը/:

2. Հանձնաժողովն արձանագրեց.

2.1 Կարգով սահմանված ժամկետում Կոմիտեից առաջին տեղը զբաղեցրած «Սիփիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ ստացվել է դրական եզրակացություն /կցվում է/:

2.2 Սույն արձանագրության 1.2 կետով պահանջվող փաստաթղթերը սահմանված ժամկետում՝ «Սիփիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊ ընկերության կողմից eauction.armeps.am համակարգով ներկայացվել են և համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին /կցվում են/:

3. Հանձնաժողովը որոշեց.

3.1 Ընտրված մասնակից ճանաչել 1 չափաբաժնով «Սիփիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊ ընկերությունը

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը /կցվում է/:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Հ. Սարոյան

անդամներ՝ _____ Հ. Հարությունյան

_____ Ա. Գաբրիելյան

քարտուղար՝ _____ Մ. Նիկոլյան